



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 06 >> օգոստոսի 2011թ.

N 273

ք. Արմավիր

<<ՄԵԾԱՄՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ, 35-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի N 874-Ա որոշումը

որոշում եմ՝

1. <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ գույք ձեռք բերելու հաշվին, ավելացնել 14.467.000 /տասնչորս միլիոն չորս հարյուր վաթսույնյոթ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամով՝ 2893 հատ լրացուցիչ սովորական անվանական բաժնետոմսեր /5000 դրամ անվանական արժեքով/ տեղաբաշխելու միջոցով:
2. Հաստատել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապիտալը՝ 132.272..000 Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի քանակը՝ 26454 /քսանվեց հազար չորս հարյուր հիսունչորս/ մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել <<Մեծամորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Արմավիրի տարածքային բաժնում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐՋՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Լ.ՍՈՒՐԱԴՅԱՆ